ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 14.12.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2021/320

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 06.12.2021թ. թիվ 26/26-1/19953-2021 գրությամբ «Ազուռ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ էկոնոմիկայի նախարարության 29.11.2021թ. թիվ 09/17642-2021 գրության հիման վրա, 06.12.2021թ. թիվ 26/26-1/19953-2021 գրությամբ նախաձեռնել է «Ազուռ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «Ազուռ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.

«Ազուռ» ՍՊԸ-ի կողմից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

«Ազուռ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/320 ընթացակարգի շրջանակներում 10.12.2021թ. ժամը 09:15-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.

ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 29.11.2021թ. թիվ 09/17642-2021 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հայտնում ենք Ձեզ, որ ՀՀ ԷՆ-ԳՀԱՊՁԲ-21/20 ծածկագրով մրցույթի արդյունքում ՀՀ Էկոնոմիկայի նախարարության և «Ազուռ» ՍՊ ընկերության միջև 26.04.2021 թվականին կնքվել է ՀՀ ԷՆ-ԳՀԱՊՁԲ-21/20-160-21 ծածկագրով գնման պայմանագիրը: Սակայն, պայմանագրի կողմ հանդիսացող «Ազուռ» ՍՊԸ-ն չի կատարել իր պայմանագրային պարտավորությունները և սահմանված ժամկետում չի մատակարարել Պայմանագրի հավելված 1-ի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանված 3-րդ եռամսյակի ապրանքները:

Հիմք ընդունելով պատասխանատու ստորաբաժանման կողմից 17.11.2021 թվականին ներկայացված թիվ Ն/5675-2021 զեկուցագիրը, պայմանագրի 2.1.7 կետը, 2.1.7.1 կետի բ ենթակետը և Քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասը՝ միակողմանի և մասնակի լուծվել է Նախարարության և Ընկերության միջև 26.04.2021 թվականին կնքված ՀՀ ԷՆ-ԳՀԱՊՁԲ-21/20-160-21 ծածկագրով գնման պայմանագիրը 4-րդ, 5-րդ, 8-րդ, 13-րդ, 14-րդ, 18-րդ, 19-րդ, և 32-րդ չափաբաժինների մասով:

Պայմանագրի կողմին պատշաճ ծանուցումն ապահովվել է՝ կիրառվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները: Ուստի խնդրում ենք, սահմանված կարգով

«Ազուռ» ՍՊԸ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/320 ընթացակարգի շրջանակներում 10.12.2021թ. ժամը 09:15-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2021/320 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2021/320 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ էկոնոմիկայի նախարարության և «Ազուռ» ՍՊԸ-ի միջև 26.04.2021թ. կնքվել է թիվ «ՀՀ ԷՆ-ԳՀԱՊՁԲ-21/20-160-21» ծածկագրով պետության կարիքների համար տնտեսական սանհիգիենիկ և լվացքի միջոցների մատակարարման պայմանագիր (հետայսու նաև՝ Պայմանագիր), որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվել է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով, նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. Պայմանագրին կից հավելված N 1-ով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, 4-րդ, 5-րդ, 8-րդ, 13-րդ, 14-րդ, 18-րդ, 19-րդ և 32-րդ չափաբաժինների մասով սահմանվել է հետևյալը.

Ապրանքի			
Հրավերով նախատեսված չափաբաժնի համար	Անվանումը	Ընդհանուր քանակը	Ժամկետը
4	Մարտկոց AAA տեսակի	100	3-րդ եռամսյակ
5	Մարտկոց AAA տեսակի	200	3-րդ եռամսյակ
8	Մեկուսիչ ժապավեններ	46	3-րդ եռամսյակ
13	Թղթե անձեռոցիկներ	500	3-րդ եռամսյակ
14	ավելներ	5	3-րդ եռամսյակ
18	Հոտազերծիչ օդի	15	3-րդ եռամսյակ
19	Կահույքի փայլեցման միջոց	20	3-րդ եռամսյակ
32	կողպեքներ	15	3-րդ եռամսյակ

3. ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը «Ազուռ» ՍՊԸ-ին ուղղված 24.11.2021թ. թիվ 09/5697-2021 գրությամբ, հայտնել է հետևյալը.

«ՀՀ էկոնոմիկայի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) և «Ազուռ» ՍՊԸ-ի միջև 26.04.2021թ. կնքվել է ՀՀ ԷՆ-ԳՀԱՊՁԲ-21/20-160-21 ծածկագրով գնման պայմանագիրը:

Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով, նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրի հավելված 1-ի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ 4-րդ, 5-րդ, 8-րդ, 13-րդ, 14-րդ, 18-րդ, 19-րդ և 32-րդ չափաբաժինների համար ապրանքի մատակարարման ժամկետ է սահմանված երրորդ եռամսյակը:

Պայմանագրի 2.1.1 կետի համաձայն՝ ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի:

Հիմք ընդունելով պատասխանատու ստորաբաժանման կողմից 17.11.2021թ. ներկայացված թիվ Ն/5675-2021 զեկուցագիրը, պայմանագրի 2.1.7 կետը, 2.1.7.1 կետի բ) ենթակետը և Քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասը, միակողմանի և մասնակի լուծել նախարարության և Ընկերության միջև 26.04.2021թ. թվականին կնքված ՀՀ ԷՆ-ԳՀԱՊՁԲ-21/20-160-21 ծածկագրով գնման պայմանագիրը 4-րդ, 5-րդ, 8-րդ, 13-րդ, 14-րդ, 18-րդ, 19-րդ և 32-րդ չափաբաժինների մասով: Պատշաճ ծանուցումն ապահովելու համար կկիրառվի ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները: (...)»:

4. Պատվիրատուի կողմից www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում (հետայսու նաև՝ Տեղեկագիր) 25.11.2021թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի մասնակի լուծելու մասին ծանուցումը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 06.12.2021թ. թիվ 26/26-1/19953-

2021 գրությունը, ՀՀ էկոնոմիկայի նախարարության 29.11.2021թ. թիվ 09/17642-2021 գրությունը՝ կից փաստաթղթերով, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (հետայսու նաև՝ Օրենսգիրք) 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով

նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Այսպես, ՀՀ էկոնոմիկայի նախարարության և «Ազուռ» ՍՊԸ-ի միջև 26.04.2021թ. կնքվել է թիվ «ՀՀ ԷՆ-ԳՀԱՊՁԲ-21/20-160-21» ծածկագրով պետության կարիքների համար տնտեսական սանհիգիենիկ և լվացքի միջոցների մատակարարման պայմանագիր, որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվել է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով, նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրին կից հավելված N 1-ով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, 4-րդ, 5-րդ, 8-րդ, 13-րդ, 14-րդ, 18-րդ, 19-րդ և 32-րդ չափաբաժինների մասով սահմանվել է հետևյալը.

Ապրանքի			
Հրավերով նախատեսված չափաբաժնի համար	Անվանումը	Ընդհանուր քանակը	Ժամկետը
4	Մարտկոց AAA տեսակի	100	3-րդ եռամսյակ
5	Մարտկոց AAA տեսակի	200	3-րդ եռամսյակ
8	Մեկուսիչ ժապավեններ	46	3-րդ եռամսյակ
13	Թղթե անձեռոցիկներ	500	3-րդ եռամսյակ
14	ավելներ	5	3-րդ եռամսյակ
18	Հոտազերծիչ օդի	15	3-րդ եռամսյակ
19	Կահույքի փայլեցման միջոց	20	3-րդ եռամսյակ
32	կողպեքներ	15	3-րդ եռամսյակ

ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը «Ազուռ» ՍՊԸ-ին ուղղված 24.11.2021թ. թիվ 09/5697-2021 գրությամբ, հայտնել է հետևյալը.

«ՀՀ էկոնոմիկայի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) և «Ազուռ» ՍՊԸ-ի միջև 26.04.2021թ. կնքվել է ՀՀ ԷՆ-ԳՀԱՊՁԲ-21/20-160-21 ծածկագրով գնման պայմանագիրը:

Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով, նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրի հավելված 1-ի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ 4-րդ, 5-րդ, 8-րդ, 13-րդ, 14-րդ, 18-րդ, 19-րդ և 32-րդ չափաբաժինների համար ապրանքի մատակարարման ժամկետ է սահմանված երրորդ եռամսյակը:

Պայմանագրի 2.1.1 կետի համաձայն՝ ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի:

Հիմք ընդունելով պատասխանատու ստորաբաժանման կողմից 17.11.2021թ. ներկայացված թիվ Ն/5675-2021 զեկուցագիրը, պայմանագրի 2.1.7 կետը, 2.1.7.1 կետի բ) ենթակետը և Քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասը, միակողմանի և մասնակի լուծել նախարարության և Ընկերության միջև 26.04.2021թ. թվականին կնքված ՀՀ ԷՆ-ԳՀԱՊՁԲ-21/20-160-21 ծածկագրով գնման պայմանագիրը 4-րդ, 5-րդ, 8-րդ, 13-րդ, 14-րդ, 18-րդ, 19-րդ և 32-րդ չափաբաժինների մասով: Պատշաճ ծանուցումն ապահովելու համար կկիրառվի ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները: (...)»:

<u>Պատվիրատուի կողմից Տեղեկագրում 25.11.2021թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի մասնակի լուծելու մասին ծանուցումը:</u>

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ ***<u>մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:</u>***

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը:

Պայմանագրի 2.1.7.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողի կողմից կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում,

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են ***<u>30</u>*** օրից ավելի:

Պայմանագրի 6.6 կետի համաձայն՝ Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Այսպիսով՝ վերը շարադրված փաստական հանգամանքների ուժով՝ արձանագրում եմ, որ «Ազուռ» ՍՊԸ-ն խախտել է իր և ՀՀ էկոնոմիկայի նախարարության միջև 26.04.2021թ. կնքված Պայմանագրով ստանձնած պարտավորությունները, ինչի արդյունքում Ընկերությունը թույլ է տվել Պայմանագրի էական խախտում, որն էլ իր հերթին հանգեցրել է Պատվիրատուի կողմից Պայմանագրի միակողմանի լուծման:

Ելնելով վերոգրյալից՝ գտնում եմ, որ Ընկերությունը թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված խախտում, ուստի առկա են «Ազուռ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

ՈՐՈՇԵՑԻ

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 06.12.2021թ. թիվ 26/26-1/19953-2021 գրությամբ «Ազուռ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Ազուռ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**